

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-26/2**

ք.Երևան

« 06 » հունիսի 2026թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Դ.Մաթևոսյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Թիմ Սոլուշնս» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ.Ավագյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ՊԵԿ-ում ներդրված «Հարկատու 3» համակարգի և դրա ենթահամակարգերի սպասարկման խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **47 123 287 (Քառասունյոթ միլիոն մեկ հարյուր քսաներեք հազար երկու հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5՝ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՖՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը և պայմանագրով նախատեսված պայմանները տարածվում են 2026 թվականի հունիսի 9-ից ծագած փաստացի հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Պայմանագրի կատարման փուլում ոչ գնային նվազագույն չափանիշների մասով Կատարողի կողմից ստանձնած և հայտարարած պարտավորությունների չպահպանման վերաբերյալ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 27 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

ԿԱՏԱՐՈՂ

«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ
ք. Երևան, Հ.Հակոբյան-3
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570069343740100
ՀՎՀՀ 00228737
«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ի տնօրեն՝

Դ.Մաթևոսյան

(ստորագրություն)

Կ.Տ



Տ.Ավագյան

(ստորագրություն)

Կ.Տ



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ ՊԵԿ-ում ներդրված «Հարկատու 3» համակարգի և դրա ենթահամակարգերի սպասարկման խորհրդատվական ծառայություններ

CPV – 72261160/25

Նպատակը՝

ՀՀ ՊԵԿ-ում ներդրված «Հարկատու 3» համակարգի և դրա ենթահամակարգերի, ինչպես նաև դրանք համալրող միջոցների և ծրագրերի սպասարկման ծառայությունների մատուցում:

Մատուցվող ծառայությունների շրջանակ.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 1

Մատուցել ՀՀ ՊԵԿ-ի հարկային մարմնում գործող ստորև նշված էլեկտրոնային կառավարման համակարգերի և դրանց ենթահամակարգերի սպասարկման ծառայություններ՝ ապահովելով դրանց անխափան աշխատանքը.

- Հայտնաբերված խնդիրների ուղղում:
- Փոփոխություններ սույն տեխնիկական քննադատական համապատասխան:
- Համակարգի օպտիմիզացում:

Սպասարկվող էլեկտրոնային կառավարման համակարգերի և դրանց ինտերֆեյսի բաժինների, ենթաբաժինների և էջերի ցանկ՝

«ՀԱՐԿԱՏՈՒ-3» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ - հարթակ, որը հնարավորություն է տալիս ՀՀ ՊԵԿ աշխատակցին, առցանց ռեժիմում, սպասարկել հարկ վճարողին, աշխատել հարկ վճարողի կողմից ներկայացված հաշվարկ/հաշվեկտրություններում առկա տվյալների հետ, իրականացնել համապատասխան վերուժություններ, վարել անձնական հաշվի քարտ (այսուհետ՝ ԱՀՔ), հավաքագրել եկամուտներ:

Համակարգի բաժիններն են՝

1. **Փաստաթղթեր** - հարկ վճարողի կողմից հարկային մարմնին հանձնված թղթային հաշվարկ/հաշվեկտրությունների մուտքագրման, խմբագրման, էլեկտրոնային հաշվարկ/հաշվեկտրությունների դիտման, հարկային մարմնի կողմից փաստաթղթերի գրանցման հնարավորության ստեղծում:

Փաստաթղթեր բաժնի ենթաբաժիններն են՝

- Հայտարարագրեր (գրանցամատյան, նոր հայտարարագիր, նոր ստուգման ակտ, մուտքագրել փաստաթուղթ, անավարտ փաստաթուղթ, առցանց գրանցում):
- Վճարումներ (Նոր վճարում, վճարման անդորրագրեր, վճարումներ, միասնական հաշվի շարժ)
- ՀԴՄ (Հակից դրամարկային մեքենա) ֆիսկալ հասույթ (ՀԴՄ ֆիսկալ հասույթ, նոր ֆիսկալ հասույթ):
- ԱՀՔ (ԱՀՔ (մինչև 31.12.2017), ԱՀՔ (01.01.2018-ից))
- Արտոնագրային վճարի գրանցամատյան:
- Գրքերի գրանցամատյան:
- Դրամարկային գրքեր:
- Բոլորքներ (նոր բոլորքներ, բոլորքների գրանցամատյան):
- Դիմումների գրանցամատյան:
- ԱԱՀ-ի վերադարձի հաշիվներ:
- ԵՏՄ գործարքների դարան (ԵՏՄ գործարքների դարան, նոր գործարք, տվյալների փոխանակում):
- Կամերալ ուսումնասիրություններ
- Պետական տուրքի գրանցամատյան
- Միկրոձեռնարկատիրության արտոնագիր

2. Հաշվետվություններ - հարկ վճարողի կողմից հարկային մարմնին հանձնված հաշվարկ/հաշվետվություններում առկա տեղեկատվության արտաձևան հնարավորության ստեղծում՝ ստարնդարտ հաշվետվությունների տեսքով:

Հաշվետվություններ բաժնի ենթաբաժիններն են՝

- Ապարքացուցակի հաշվետվություն (Ապարքացուցակի հաշվետվություն մինչև 31.12.2017թ., Ապարքացուցակի հաշվետվություն 01.01.2018թ.-ից հետո):
- Մաքսային տվյալներ:
- ՀԴՄ-ների հաշվետվություններ (տոնավաճառներ, չուղարկված տվյալներ, ՀԴՄ-ի կտրվածքով՝ SAM քարտով, ՀԴՄ-ի կտրվածքով՝ SAM քարտով, հասույթ, գնորդի ՀՎՀՀ պարունակող կտրոններ):
- SUY-ներ (Տեխնիկական սպասարկման կենտրոններ):
- ԱՀՔ մնացորդ (ԱՀՔ մնացորդ մինչև 31.12.2017թ., ԱՀՔ մնացորդ 01.01.2018թ.-ից հետո):
- ԱՀՔ փաստաթղթերի մարման պատմություն
- Հարկային հաշիվներ:
- Հաշվարկային փաստաթղթեր:
- Լիցենզիաներ, թույլտվություններ և ծանուցումներ:

- Երրորդ անձանց կողմից ստացված տեղեկատվություն (Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվություն, շարժական գույքի վերաբերյալ տեղեկատվություն, ստուգումների վերաբերյալ տեղեկատվություն, օդային ուղևորների վերաբերյալ տեղեկատվություն)
- **Եկամտային հարկի վերադարձի վերաբերյալ տեղեկատվություն (<Խալտեկային վարկի վճարված տոկոսագումարների վերաբերյալ տեղեկատվություն, եզրակացությունների գրանցամատյան, Անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվություն)
- ***Վիճակագրություն (Երրորդ երկրից << տարածք ներմուծված և ԵԱՏՄ արտահանված հետազոտությունների վերաբերյալ պահեստ, ԵԱՏՄ անդամ երկրներից << տարածք ներմուծված հետազոտության ենթակա ապրանքների վիճակագրություն)

3. Տեղեկատվություն - տեղեկատվության հավաքագրման հնարավորության ստեղծում :

Տեղեկատվություն բաժնի ենթաբաժիններն են՝

- Տեղեկատվության ներմուծում (մաքսային տվյալներ, գանձապետարանի տվյալների ներմուծում, լիցենզիաների և ծանուցումների տվյալների ներմուծում, երրորդ անձանց կողմից ստացված տեղեկատվության ներմուծում):
- Ներմուծման սխալներ
- Վարչական իրավախախտումներ (Վարչական իրավախախտումներ, Նոր խախտում)
- Իրավական վարույթներ (Իրավական վարույթների նախնական ցուցակ, Արգելադրման աշխատանքների դիտում)
- Հայցերի/գանձման որոշումներ (Նոր հայցի/գանձման որոշման գրանցում, Հայցերի/գանձման որոշումների դիտում)
- Իրավական վարույթներ (Հարկային պարտավորությունների հարկադիր գանձման վարույթներ, Արգելադրման աշխատանքներ, Դատական վարույթներ, Վարչական կարգով բողոքարկումներ, Մնանկության վարույթներ, Քրեական վարույթներ, Լիազորությունների ժամանակավոր փոխանցում):

4. Կառավարում - հարկ վճարողի հաշվառմանը վերաբերվող ամբողջական տեղեկատվության դիտման, խմբագրման, ծանուցումների ձևավորման և ուղարկման հնարավորության ստեղծում:

Կառավարում բաժնի ենթաբաժիններն են՝

- Հարկ վճարողներ (Հարկ վճարողների տվյալներ, գործունեության հասցե):
- ՀԴՄ-ներ (<ԴՄ-ներ, ՀԴՄ տեսչներ, ՀԴՄ-ների գրանցում (ժամանակավոր))
- Օբյեկտներ
- Հաշվարկված ապառքացուցակներ
- Հիշեցում-ծանուցումների ենթահամակարգ (սոց.վճարի ծանուցումների ցանկեր, հիշեցում-ծանուցումների ցանկեր)
- Բոլոր հիշեցում ծանուցումները
- Հարկման ռեժիմներ
- Տվյալների տարբերակներ
- Գործարքների մոնիտորինգ (ծանուցումների ուղարկում, ծանուցումների գրանցամատյան)

- **Շահառուներ (Շահառուների գրանցամատյան, Վարձու աշխատողների եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն, Ուսանող վարձու աշխատողին վերաբերող տեղեկատվություն)
- Վերահսկվող գործարքներ

5. Սպասարկվում - համակարգերից օգտվողների դերերի, համակարգում գործող բառարանների կառավարման հնարավորության ստեղծում:

Սպասարկում բաժնի ենթաբաժիններն են՝

- Օգտվողի տվյալներ
- Դերերի կառավարում
- Բառարաններ (բառարաններ, բառարանների փոփոխությունների պատմություն)
- Առցանց օգտվողներ
- Առցանց լիազորներ
- *e-VAT լիազորված անձ

6. Ռիսկերի գնահատման ենթահամակարգ - ստուգման ենթակա ռիսկային հարկ վճարողների ցանկերի ձևավորման հնարավորության ստեղծում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ (file-online) - հարթակ, որը հնարավորություն է ընձեռում հարկ վճարողին, առցանց ռեժիմում հարկային մարմնին ներկայացնել հաշվարկ/հաշվեկշիռություններ, տեսնել իր հաշվառման, գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, ստանալ ծանուցումներ և հայտարարություններ:

Համակարգի բաժիններն են՝

- 1) **Անձնական գրասենյակ** - հարկ վճարողի, որպես օգտվող, վերաբերյալ ամբողջական տեղեկատվության արտացոլման հնարավորության ստեղծում:

Անձնական գրասենյակ բաժնի ենթաբաժիններն են՝

- Անհատական հաշիվ (անձնագրային տվյալներ)
- Նորություններ
- Վճարումներ
- Հարկային պարտավորություններ (ԱՀՔ դիտում, Միանական հաշիվ, Անցումային գերավճար, ԱՀՔ քաղվածք)
- Ծանուցումներ (Ծանուցումներ, Ծանուցագրեր և որոշումներ, Ստուգումներ, հանձնաժողովի որոշումներ, Վերահսկվող գործարքների ծանուցումներ)
- Հարկ վճարողներ
- Աշխատողներ
- ՀՂԴ-ներ (ՀՂԴ-ների ցանկ, Ֆիսկալ հասույթ, ՀՂԴ-ի կտրվածքով, Դիմումներ, ՀՂԴ-ի ապրանքների ցանկեր, Հասույթ, Գնորդի ՀՎՀՀ պարունակող կտրոններ)

- Դրոշմանիշեր և դրոշմապիտակներ
- ԵՏՄ գործարքների դարան
- Դրամարկդային գրքեր
- Արտոնագրային հարկ (Արտոնագրային հարկի գրանցամատյան, Օբյեկտների տվյալներ)
- Էլեկտրոնային վճարման կարգադրություններ
- Հարկերից ազատման արտոնագիր
- Պետական տուրքի գրանցամատյան
- Միկրոձեռնարկատիրության արտոնագիր:

2) **Հաշվետվություններ** - հարկ վճարողի կողմից հարկային մարմնին հանձնվող հավարկ/հաշվետվությունների ձևաչափերի ստեղծում:
Հաշվետվություններ բաժնի ենթաբաժիններն են՝

- Հաշվետվությունների ձևեր
- Անավարտ հաշվետվություններ
- Լրացված հաշվետվություններ
- Հանձնված հաշվետվություններ

3) **Դերերի կառավարում** - համակարգից օգտվողների առցանց լիազորի հայտի ներկայացում, դերերի առցանց կառավարում հարկ վճարողի՝ որպես առցանց լիազորի (արմինիստրատորի) կողմից:

Դերերի կառավարում բաժնի ենթաբաժիններն են՝

- Օգտվողների տվյալներ
- Լիազորների տվյալներ
- Գործողություններ

*** ԷԼԵԿՏՐՈՆԱԶԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱԱՀ-Ի ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (E-VAT)** – հարթակ, որը հնարավորություն է տալիս ՀՀ ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայություններ մատուցող ոչ ռեզիդենտ կազմակերպություններին հաշվառվելու հարկային մարմնում, ներկայացնելու օրենսդրությամբ սահմանված հաշվարկ-հաշվետվությունները, վճարելու մատուցված ծառայությունից ձևավորված ԱԱՀ-ն, ստանալու ծանուցումներ, տեսնելու հայտարարություններ և արտարժույթների փոխարժեքը: Համակարգը եռալեզու է՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն:

Համակարգում գրանցվելու հատվածը բաղկացած է հետևյալ էջերից՝

- Առցանց հարցում

- Գրանցման դիմում
- Մուտքի էջ

Համակարգի բաժինները և ենթաբաժիններն են՝

1. Տեղեկատվություն
 - Օգտվողի վերաբերյալ տեղեկատվություն
 - Գաղտնաբառի փոփոխում
 - Փոխարժեք
 - Միանական հաշիվ
 - ԱՀԲ քաղվածք
2. Հաշվետվություններ
 - Հաշվետվությունների ձևեր
 - Անավարտ հաշվետվություններ
 - Լրացված հաշվետվություններ
 - Հանձնված հաշվետվություններ

3. Վճարումներ

- Էլեկտրոնային վճարումներ
- Բանկային ռեկվիզիտներ

4. Ծանուցումներ
5. Լիազորված Անձ
6. Օրենսդրություն

ՆՈՐ ՄԵՐՆԴԻ ՀՍԿԻԶ ԴՐԱՄԱՐԿԴԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՎԱՐԳ - հարթակ, որը հնարավորություն է տալիս հարկ վճարողներին տաել ՀԴԱ կտրոններ, իսկ **ՊԵԿ** աշխատակիցներին՝ իրականացնել ՀԴԱ-ից ստացված տվյալների հիման վրա համապատասխան վերլուծական աշխատանքներ:

Համակարգի ենթահամակարգերն ու մոդուլներն են՝

1. Տվյալների փոխանակում ՀԴԱ-ների. այդ թվում նաև Էլեկտրոնային ՀԴԱ-ների և ՀՀ ՊԵԿ սերվերների միջև - ՀՀ ՊԵԿ-ում ներդրված ՀԴԱ-ների, այդ թվում նաև Էլեկտրոնային ՀԴԱ-ների և ՀՀ ՊԵԿ սերվերների միջև տվյալների փոխանակման հնարավորության սպեղծում:

Ենթահամակարգի մոդուլներն են՝

- ՀԴՄ ծրագրերի թարմացման կառավարման մոդուլ:
- ՀԴՄ տվյալների փոխանակման մոդուլ:
- ՀԴՄ-ի և անկանխիկ վճարումների իրականացման համակարգի ծրագրային փաթեթի միջև տվյալների փոխանակման մոդուլ:

2. ՀԴՄ-ների վրա տեղադրվող ծրագրային ապահովման ենթահամակարգ - ՀԴՄ հիմնական գործողությունների, ՀԴՄ շահագործման կանոնների ստեղծման գործողությունների, ՀԴՄ կրողների վրա տրվող ապրանքների կառավարման, հարկային հաշիվների ենթածրագրի, ԱԱՀ վերադարձով հարկային հաշիվների, և նույնականացման քարտերով ստորագրման հնարավորության ստեղծում:

Ենթահամակարգի մոդուլներն են՝

- ՀԴՄ հիմնական գործողություններ
- ՀԴՄ շահագործման կանոնների ստեղծման գործողություններ
- ՀԴՄ կրողների վրա տրվող ապրանքների կառավարում

3. Առևտրային ծրագրերի հետ ՀԴՄ ծրագրի ինտեգրման ծրագրային ապահովման ենթահամակարգ - ՀԴՄ ծրագրի արտաքին առևտրային ծրագրի հետ ինտեգրման վեբ սերվիսի սպասարկման և խորհրդարկության իրականացում առևտրային ծրագրային ապահովում ստեղծող կազմակերպություններին:

Ենթահամակարգի մոդուլներն են՝

- ՀԴՄ ծրագրի արտաքին առևտրային ծրագրի հետ ինտեգրման վեբ սերվիսի սպասարկում և խորհրդատվություն առևտրային ծրագրային ապահովման ստեղծող կազմակերպություններին,
- ՀՀ ՊԵԿ-ի կազմակերպած պարբերական խորհրդատվական հանդիպումների վարում ՀԴՄ ծրագրի արտաքին առևտրային ծրագրի հետ ինտեգրման արդյունավետության բարձրացման նպատակով:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (local) - հարթակ, որը հնարավորություն է ընձեռում հարկ վճարողին, առցանց ռեժիմում, որոշ գրեյ և/կամ հաստատել հարկային հաշիվներ/հաշվարկային փաստաթղթեր:

Համակարգի բաժիններն են՝

- Հարկային հաշիվներ
- Հաշվարկային փաստաթղթեր
- ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվներ

Առևտրային ծրագրերի հետ հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման ծրագրին ինտեգրման ենթահամակարգ - արտաքին առևտրային ծրագրի հետ ինտեգրման, սպասարկման և խորհրդարկության իրականացում առևտրային ծրագրային ապահովում սպեղծող կազմակերպություններին:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (E-INVOICING WEB) - հարթակ, որը հնարավորություն է տալիս հարկ վճարողներին (կազմակերպություններին, անհար ձեռնարկարերերին և նոտարներին) ապրանքի մարակարարման, աշխարանքի կարարման և (կամ) ծառայության մարուցման գործարքների մասով առցանց ռեժիմում դուրս գրել ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված համապարասխան հաշվարկային փաստաթղթեր: «Հաշվարկությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆՀ) նոր «Հաշվարկային փաստաթղթեր» ենթաէջի միջոցով հնարավոր է մուրք գործել «էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» (e-invoicing) համակարգ:

Համակարգի բաժիններն են՝

- ✓ **Հաշվարկային փաստաթղթեր** (զխավոր էջ) - հարկ վճարողների կողմից ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման հնարավորության ստեղծում: Էջի միջոցով հնարավոր է լրացնել և դուրս գրել հարկային հաշիվներ և (կամ) հաշիվ վավերագրեր՝ անմիջապես ընտրելով հաշվարկային փաստաթղթի տեսակը, ինչպես նաև դիտել ստեղծված (փոփոխված) վերջին հաշվարկային փաստաթղթերի վերաբերյալ տվյալներ:
- ✓ **Հարկային հաշիվներ** - հարկ վճարողների կողմից ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման, դիտման, անվավեր ճանաչման, չեղարկման, ջնջման, ճշգրտման հնարավորության ստեղծում, համապատասխան ապրանքների հետագծելիության ապահովում:

Հարկային հաշիվների տեսակներն ու դրանց համապատասխան ձևերն են՝

- Ալցիզային հարկով հարկվող ապրանքների հարկային հաշիվ
 - Հարկ վճարողի անունից
 - Մատակարարի անունից
 - Հանձնարարողի (ալինցիպալի) անունից
 - Համատեղ գործերը վարողի անունից
- Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ
 - Հարկ վճարողի անունից
 - Մատակարարի անունից
 - Հանձնարարողի (ալինցիպալի) անունից
 - Համատեղ գործերը վարողի անունից
- Ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման հարկային հաշիվ
 - Հարկ վճարողի անունից
 - Մատակարարի անունից
 - Հանձնարարողի (ալինցիպալի) անունից

- Համատեղ գործերը վարողի անունից
 - ԱԱՀ-ի վերադարձի հաշիվ
 - Լիզինգի առարկայի հանձման-ընդունման ակտ
 - ԵՏՄ Արտահանման հաշիվ-վավերագիր (հետագծելիության ենթակա ապրանքների արտահանում),
 - ԵՏՄ տեղափոխման բեռնագիր վավերագիր (հետագծելիության ենթակա ապրանքների տեղափոխում),

Հարկային հաշիվներ բաժնի ենթաբաժիններն են՝

- Սևագրեր
- Դուրս գրված
- Ստացված
- Անվավեր
- Չեղյալ
- Զնցված

Ենթաբաժնի գլխավոր էջի միջոցով հնարավոր է լրացնել և դուրս գրել հարկային հաշիվներ՝ անմիջապես ընտրելով հաշվարկային փաստաթղթի տեսակը կամ «Ստեղծել» կոճակի միջոցով:

Սևագրեր ենթաբաժնի միջոցով հնարավոր է ստեղծել հարկային հաշիվներ, որոնք (ըստ պարամետրերի), դիտել, արտածել, ջնջել, կրկնօրինակել սևագիր հարկային հաշիվները, ներբեռնել XML տեսակի փաստաթուղթ և արտահանել (այդ թվում՝ PDF, XML և XLS), ինչես նաև ստորագրել (դուրս գրել) հարկային հաշիվը:

Դուրս գրված ենթաբաժնի միջոցով հնարավոր է որոնել (ըստ պարամետրերի) և դիտել հարկ վճարողի կողմից դուրս գրված հարկային հաշիվները, կրկնօրինակել, ստեղծել նոր հարկային հաշիվ, ներբեռնել XML տեսակի փաստաթուղթ և արտահանել (այդ թվում՝ PDF, XML և XLS), ճշգրտել նախկինում դուրս գրված հարկային հաշիվը, չեղարկել կամ անվավեր ճանաչել այն:

